

ՀՈՒՆՎԱՐ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	8
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություններ	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	21
3.5. Գոտիավորման աշխատանքներ	22
3.6. Քլորի և իսմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	24
3.7 1-85 թեժ գիծ	26
4. Լրատվական ծառայություն	27
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	30
5.1. Փաստաթղթերի մշակում	31
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	31
5.3. Դասընթացներ/սեմինարներ	31
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	34
6.1. Համակարգային ցանց	35
6.2. Ինտերակտիվ համակարգ	35

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

● **Քաղաք Երևան**, Կենտրոն վարչական շրջան «Հարավ» ՇՏ «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Տիգրան Մեծի պողոտա թիվ 40 5-հարկանի շենքի վերին հարկերում ջրի ճնշումը անբավարար էր, ինչն առաջացնում էր բնակիչ-բաժանորդների դժգոհությունը: «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է ուսումնասիրություն և հարցի կարգավորման համար անհրաժեշտություն է առաջացել փոխարինել շենքը սնող մուտքագծի քայքայված $d=40$ մմ պողպատե խողովակը: Տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է նոր պոլիէթիլենային ջրագիծ $d=63$ մմ $L=48$ գծ/մ ընդհանուր երկարությամբ: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը:



● «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ծիծեռնակաբերդի ՕԿՁ-ի տարածքում գոտիավորման խմբի և տեղամասի աշխատակիցների կողմից իրականացված վթարառոտողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար ջրամբարից դուրս եկող $d=250$ մմ ջրատարի վրա: Տեղամասի աշխատակիցների կողմից $d=250$ մմ թուջե վթարված խողովակը կտրվել է, տեղադրվել է թվով 2 $d=250$ մմ ճկուն միացում կցաշուրթերով: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ $Q=10$ լ/վրկ ջրաքանակ:

Մարզ Սյունիք

● «Հարավ» ՇՏ «Մեղրի» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող ք. Ագարակ, Մայաթ Նովա 1 հասցեում գտնվող $d=200$ մմ կերամիկական կոյուղագիծը, որը կառուցվել էր 1950-ական թվականներին, տարիների ընթացքում առաջացած նստվածքների պատճառով տեղ-տեղ կտրվել էր և արմատակալել, ինչի հետևանքով կոյուղագիծը ենթակա չէր հետագա շահագործման: «Մեղրի» տեղամասի աշխատակիցների կողմից մոտ 2 մետր խորության վրա կառուցվել է նոր $d=200$ մմ $L=40$ գծ/մ երկարությամբ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային կոյուղագիծ, տեղադրվել է թվով 1 դիտահոր: Կատարված աշխատանքների արդյունքում կոյուղագիծը գործում է անխափան:



Հունվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2,796
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	25,765
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	22,800
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	10,290
Ջրաչափական հանգույններ ուսուճասափրություն, սխեմաների կազմում	հատ	11
Շահագործումից հանված ջրագիծ	մ	764
Կառուցված ջրագիծ	մ	957.5
Կառուցված կոյուղագիծ	մ	147
Վերացված գաղտնի վթարներ	հատ	26
Փոխարինված փական	հատ	20
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	397
Մաքրված դիտահոր	հատ	186
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	57.2
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	856
Ջրահեռացման ցանցում	հատ	2396
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	81

Հունվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	429	819	321

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքները	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	143	5	3	1	0	0	0	0	0	152
Փոխարինված	293	26	1	2	1	0	1	1	0	325
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	40	86	3	0	0	1	0	0	0	130
Ընդամենը	476	117	7	3	1	1	1	1	0	607

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 607 ջրաչափ: Կատարված աշխատանքների 78,42 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1640	290	0
2	Մաշտոց	770	253	0
3	Շահումյան	2400	254	0
4	Զեյթուն	650	256	0
5	Շիրակ	470	437	6
6	Արթիկ	0	65	6
7	Ապարան	0	30	6
8	Ալավերդի	1610	21	3
9	Աշոցք	0	6	0
10	Բերդ	0	9	0
11	Իջևան	845	37	0
12	Լոռի	1220	201	6
13	Նոյեմբերյան	0	17	0
14	Սպիտակ	0	17	0
15	Ստեփանավան	45	17	0
16	Թալին	0	23	3
17	Տաշիր	260	8	0
18	Էջմիածին	0	147	12
19	Չարենցավան	500	82	0
20	Աբովյան	2392	82	0
21	Հրազդան	1810	93	0
22	Աշտարակ	1650	15	0
23	Կենտրոն	240	237	0
24	Հյուսիս	0	283	0
25	Հարավ	0	417	36
26	Էրեբունի	0	235	0
27	Արմավիր	0	116	0
28	Արտաշատ	0	129	0
29	Արարատ	360	74	0
30	Մասիս	0	47	0
31	Գավառ	155	20	0
32	Սևան	0	83	0
33	Մարտունի	0	16	0
34	Վարդենիս	300	13	0
35	Ճամբարակ	0	8	0
36	Դիլիջան	0	33	0
37	Վայք	100	14	0
38	Եղեգնաձոր	0	6	0
39	Ջերմուկ	0	16	0
40	Սիսիան	270	64	0
41	Գորիս	0	29	0
42	Կապան	530	67	0
43	Մեղրի	0	19	0
		18217	4286	78

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում կոնվեյերները և քերիչ սանրերը խցանվել էին, որի պատճառը դարձել էր մեծ քանակի կեղտի մուտքը սարքավորումներ: Արդյունքում մաքրվեցին խցանված հատվածները և այժմ կայանը աշխատում է բնականոն ռեժիմով:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի պոմպը ջուր չէր մղում: Ապամոնտաժելուց հետո պարզ դարձավ, որ բանվորական անիվը կոտրվել է: Արդյունքում փոխարինվեց բանվորական անիվը և այժմ պոմպը աշխատում է բնականոն ընթացքով:

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի հակադարձ փականները խցանվել էին իսկ մեկ հակադարձ փականի փակող թևը կոտրվել էր: Արդյունքում դրանք մաքրվեցին և վերանորոգվեց կոտրված հակադարձ փականը:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում զննվեցին և կարգաբերվեցին մանր ճաղավանդակի քերիչ սանրերը և կոնվեյերների պոլիէթիլեն պատյանները: Նաև կոտրվել էր մուտքի դարպասը, որը վերանորոգվեց:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	89,425	21.6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	87,047	16.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	174,394	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	143,794	5.4
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	120,824	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,815	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,782	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	17,600	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	9,950	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	66
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	21
Այցեր	6
Պոմպի վերանորոգում	2
Պոմպի տեղադրում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հունվար ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հունվար ամսվա ընթացքում նորոգվել են թվով 2 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 5 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփսեր, առանցքակալներ, կիսատնիններ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 4 անվադողեր նորոգվել են, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 1 մեքենայի մարտկոցները փոխարինվել են նորերով:

Փոխարինվել են թվով 21 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և անտիֆրիզ:

Թվով 6 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 5 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, մխոցներ:

Վերանորոգվել են թվով 8 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 3 մեքենամեխանիզմների վրա:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 4 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 4 մեքենաների վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ: Թվով 5 մեքենաների վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Նորոգվել է թվով 4 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփսերը, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.02.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 523,949 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. հունվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	652,986	502,086	76,9
	Իրավաբանական անձ	28,943	21,863	75,5

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	724,213	569,236	78,6
	Իրավաբանական անձ	34,454	23,651	68,6

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Արդյուքնում տեղամասերում 2021թ. հունվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվը, (այցելությունների թիվը), չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 24,836 բաժանորդով (կամ մոտ 4,4%):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 788 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 1290 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 01.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	489	585	116	1190
	Իրավաբանական անձ	35	63	11	109
	Ընդամենը	524	648	127	1299

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունվար ամսին փոխարինված 1290 ջրաչափերի մոտ 60%-ը (կամ 775 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 75,634 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հունվար ամսին գանձումը կազմել է 1,452 մլն դրամ (85 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարուժեքը սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև մարտ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում

կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև ռազմական դրությունը, ընկերությունը հունվար ամսին զերծ է փացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կիրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հունվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 53 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 6,3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

<i>Տնօրինություն</i>	<i>Պարտքը 01.02.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)</i>	<i>Այդ թվում դեկտեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)</i>
Առևտրային, այդ թվում	7,498	1,816
Բնակիչ-բաժանորդներ	5,616	1,251
Իրավաբանական անձեր	1,882	565

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 237,8 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2021 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.02.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	689,402	567,465	82.31	33,320	23,641	70.95
	Առանց ջրաչափի	34,811	1,771	5.09	1,134	10	0.88

Տվյալների բազայում 01.02.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	861,366	380,701	44.20	37,302	9,982	26.76

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2652 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 581 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2325	1897	81.6
գ.Պոռչյան	1561	1033	66.1
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5862	1815	32.0

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 8,083, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 6,493, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1012, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,553, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 956, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1238 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3032 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Առևտրային	161	89,606	13,310,080

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հունվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.0%, ինչը 0.8%-ով ցածր է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




● Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 35 ՃԿՓ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների ցանկը և դրանց գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի հունվար ամսին, 2020թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 85 լվ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը ավելացել է 380 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 8267 կՎտ.ժ. (1,56%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ, ինչը պայմանավորված է եղանակային ցուրտ պայմաններով:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 240 հասցե: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են հավելագրում՝ 3138 կՎտ, որը ճշտորոշվել է ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից: Բացի այդ, թվով 1 հասցեում հայտնաբերվել է լարանցում 1759 կՎտ (73268 դրամ), որի համար կազմվել է արձանագրություն: Արդյունքում պատճառված 73 268 ՀՀ դրամ վնասը հատուցվել է:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 2847,84 կՎտ.ժ կամ 11.8 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ, ինչը պայմանավորված է եղանակային ցուրտ պայմաններով:

Էջմիածին



● Շիրակ քաղաքում էլ. էներգիայի ծախսը նվազել է 479 կՎտ/ժ կամ 1,4 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




Կատարված աշխատանքներ

Թվով 32 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 21 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:
 Թվով 294 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 131 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրու

Թվով 6 հասցեում տեղադրվել են ինվերտորներ: Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, ավելացել է 516,07 ԿՎտ/ժ կամ 11,79%:


Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 24 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանուժներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Հունվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 363,411 կՎտ.ժամ կամ 45,29% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 148,602 կՎտ.ժ/ամիս կամ 7,42 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 546,340 կՎտ.ժ կամ 13,71 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են հունվար ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Շահագործումից հանված ջրագիծ	մետր	615
Կառուցված ջրագիծ	մետր	1733.8
Կառուցված կոյուղագիծ	մետր	334
Շահագործումից հանված կոյուղագիծ	մետր	159
Կառուցվող կոյուղագծերի սխեմատիկ քարտեզների գծագրում	հատ	8
Կառուցվող ջրագծերի սխեմատիկ քարտեզների գծագրում	հատ	13
Ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	726
Իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում	հատ	106
Ֆիզիկական բաժանորդների նոր կետերի ավելացում բազայում	հատ	239
Իրավաբանական բաժանորդների նոր կետերի ավելացում բազայում	հատ	73
Դիվիզան քաղաքի թվայնացում և բազայի լրացում	հատ	1
Դիվիզան քաղաքի փողոցների և շենք-շինությունների տվյալների թարմացում առցանց հասանելի աղբյուրներից Openstreetmap, Google Map, Yandex Map	աղբյուր	3
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	63
Կոտայքի մարզի քաղաքների կոյուղագծերի թվայնացում	քաղաք	4
Գյումրի քաղաքի ներքին ջրային ցանցի և ջրատարների թվայնացում, տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	քաղաք	1
Ջրատարների և ջրային ներքին ցանցի տվյալների բազայի թվայնացում	հատ	1

<i>Աշխատանքի անվանում</i>	<i>Չ/Մ</i>	<i>Քանակ</i>
ՕԿՁ-ի և ներքին ցանց միացումների ճշտում	հատ	1
Smart monitoring հավելվածից ստացված տեղեկատվության հիման վրա ջրագծերի վթարների թվայնացում	հատ	1
Տվյալների փոխանակման վերաբերյալ ձևաչափի մշակում և քայլերի հստակեցում	հատ	1
Պոմպակայանների ակտիվների դաշտային գնահատում	պոմպակայան	4
Պոմպակայանների վիճակի և ռիսկի գնահատում և մուտքագրում տվյալների բազա	պոմպակայան	2
Ջրային ցանցի գոտիների բաժանում հետևյալ համայնքների համար	համայնք	18
Շահումյան համայնքի ջրատարների ուղղում	համայնք	1
Դավիթաշեն համայնքի ներքին ջրային ցանցի և ջրատարների ուղղում	համայնք	1
Էրեբունի տեղամասի ջրային ցանցի ուղղում և տվյալների բազայի ստեղծում	համայնք	1
«Քանաքեռ Վերին» և «Ջեյթուն» ՕԿՁ-ների շրջակա տարածքների ջրատարների և ներքին ջրային ցանցի միացումների ուղղումներ և տվյալների բազայի համալրում	ՕԿՁ /հատ/	2
Կատարվել է Վայոց Ձորի համայնքների թվայնացում և մոդելների կազմում համայնքներ համար	համայնք	6
Վայոց Ձորի ջրատարների միացումների ստուգումներ	ջրատար	4

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

Արզական-Խարբերդ ջրատար

Ջրատարի վրա Արզականում գտնվող գծային փականի մոտ առաջացել էր վթար, որի գողման աշխատանքների համար անհրաժեշտություն է առաջացել կազմակերպելու ջրատարի մասնակի կանգառ՝ ջրատարի տվյալ հատվածում ճնշումը նվազեցնելու և վթարավերականգնողական աշխատանքներ կատարելու նպատակով:



Շոր-Շորի պոմպակայան

Արտաշավան-Մաղմոսավան ջրատարի ոչ բավարար ջրաքանակի պատճառով (այն ջուր է մատակարարում Աշտարակ քաղաքին) անհրաժեշտ էր գործարկել Շոր-Շորի պոմպակայանը: Մակայն էլ, էներգիա տնտեսելու նկատառումներից ելնելով կառուցվել է միջանկյալ միացում Ապարան ջրատարից դեպի Շոր-Շոր պ/կ-ի խողովակաշար: Այսպիսով, հնարավոր եղավ բավարարել Աշարատակ քաղաքի ջրապահանջը:

Գառնի-Երևան ջրատար

Ջրատարի վրա նորից առաջացել է վթար՝ ≈ 250 լ/վ: Կազմակերպվել է ջրատարի կանգառ, որի ընթացքում Արևելք ՇՏ-ի ուժերով վերականգնվել է ջրատարի բնականոն աշխատանքը:



3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գյուղ Այգաբաց

● Շիրակ տեղամասի սպասարկման տակ գտնվող Այգաբաց համայնքում 1-ին փող. 6 տան մոտ վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել և շահագործումից հանվել են D=90մմ, L=80 գ.մ և D=100մմ L=120 գ.մ պողպատե չշահագործվող քայքայված ջրագծեր: Տնտեսվել է $\approx 1/վ$ ջրաքանակ:



Գյուղ Գյումրի



● Գյումրի քաղաքի Անի թաղամաս 9 փողոց 5 շենքի մոտ վթարված ջրագիծը ուսումնասիրվել է և պարզվել է, որ այն այլևս պիտանի չէ շահագործման համար, ուստի D=75մմ պողպատե ջրագծի ներանցման միջոցով փոխարինվել է D=50մմ ՊԷ խողովակով: Շահագործումից հանվել է D=75մմ L=25 գ.մ պողպատե քայքայված ջրագիծ, որը փոխարինվել է D=50մմ, L=25 գ.մ ՊԷ խողովակով: Տնտեսվել է $\approx 1/վ$ ջրաքանակ:



Քաղաք Սևան

● Սևան տեղամասի աշխատակիցների հետ համատեղ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում, գ. Ջրառատավանի 1-ին փ., գյուղի մութքագիծը D=100մմ, փոխարինվել է մոտավոր $l=10$ մ երկաթե խողովակ և տնտեսվել է $Q \approx 1$ $լ/վ$:





● Վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում չափուճների միջոցով Նաիրյան փողոցի վրա հայտնաբերվել է վթար: Այն վերացնելուց հետո տնտեսվել է $Q=5$ լ/վ ջրաքանակ:

● Վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում Գոմաձոր թաղամասի վերջնամասում հայտնաբերվել է կիսակառույց սեփական տան միացում, որը ապամոնտաժվել է տնտեսելով $Q=0,3$ լ/վ ջրաքանակ:




Քաղաք Երևան

● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում Ծիծեռնակաբերդի ՕԿՁ-ի ելքի $D=250$ մմ թուջե խողովակի վրա հայտնաբերվել է գաղտնի վթար $Q=10$ լ/վ:

● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ համատեղ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում, Քաջազունի 11 շենքի բակում, $D=150$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է և վերացվել գաղտնի վթար $Q=10$ լ/վ:



● Շենգավիթ տեղամասի աշխատակիցների հետ համատեղ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում Բագրատունյաց 2/14 հասցեում Երևանյան լճի հարևանությամբ գտնվող ձորում, հայտնաբերվել և իցափակվել է 50մմ տրամագծի քայքայված խողովակը, որի արդյունքում շահագործումից հանվել է $L\approx 60$ մ տնտեսելով $Q=4$ լ/վ ջրաքանակ:



● Մաշտոցի տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների ընթացքում Դավթաշեն 2-րդ թաղամաս 8-րդ շենքի մոտ հայտնաբերվել և վերացվել է $Q=15$ լ/վ ջրաքանակով վթար:

● Մաշտոցի տեղամասի աշխատակիցների հետ վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում Բաշինջաղյան 175 շենքի հարևանությամբ գտնվող $D=200$ մմ թուջե խողովակի վրա հայտնաբերվել է $Q=100$ լ/վ ջրաքանակով վթար: Վթարը տեղորոշվել է տեսախցիկի օգնությամբ:

3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Հրազդանում գտնվող Մաքրավան-2 քլորակայանում վերամոնտաժվել է հեղուկ քլորը, որն ապահովել է ջրագծերի անմիջական քլորացումը Ծաղկաձորում, Հրազդանում, Չարենցավանում և Աբովյանում:



● Քաղաք Աբովյանի Նուռնուս քլորակայանում իրականացվել է Alldos ֆիրմայի անկյունային փականի տեղադրում, որի նպատակն է այն միացնել հեղուկ քլորի բալոնին անվասա շահագործման համար:

● Քաղաք Երևանում Ավան Բարաջանյան 3/1 հասցում հեղուկ քլորի համար մեխանիկական եղանակով պատրաստվել են երկու հազար հատ միջադիրներ, որի արդյունքում միացվել են քլորի տարրաները:



● Քաղաք Կապանի «Չանախչի» ՋՄԿ-ում նախկին կամրջակի քայքայված վիճակը դարձել էր մարդու կյանքի համար խիստ վտանգավոր: Այդ իսկ պատճառով, տեխնոլոգիական մասնաշենքում մետաղական փտած կամրջակը ապամոնտաժվել է և տեղում կառուցվել է նորը մոտ 25մ² (նոր մետաղական կոնստրուկցիաներով):

Իրականացված աշխատանք

● Քաղաք Կապանում «Չանախչի» ՋՄԿ-ում, արագ գործողության ֆիլտրերը լրաբեռնվել են 5մ³ նորմերի համապատասխանող կվարցային ավազով՝ բնակավայրին տրվող ջրի որակը բարելավվելու համար:

● Քաղաք Դիլիջանի «Ֆրոլովո» և «Գոլովինո» ՋՄԿ-ներում իրականացվել է խարխուլ վիճակում գտնվող պղտորաչափ սարքավորումների փոխարինում Hach ֆիրմայի արտադրության առցանց տեղեկատվություն հաղորդող պղտորաչափերով՝ բնակավայրին տրվող ջրի որակի մասին տեղում և առցանց ճշգրիտ տեղեկատվություն ստանալու համար:



Մինչ փոխարինումը



Իրականացված աշխատանք

● Քաղաք Գավառի «Հացառատ» քլորակայանում իրականացվել են տանիքի վերանորոգման աշխատանքներ՝ էլ. վահանակների ջրամեկուսացումն ապահովելու համար, իսկ «Գանձակ» ք/կ-ում արտաքին լուսավորվածությունն է վերականգնվել անվտանգության կանոնների պահպանման նպատակով:



● Մալիշկա քլորակայանում իրականացվել են կապտաժային համակարգի ուսումնասիրություններ՝ ջրաքանակ ավելացնելու նպատակով:

● Իրականացվել են այցելություններ տեղամասեր և կապտաժներ՝ տեղում իրավիճակին ծանոթանալու նպատակով:

● Քաղաք Վարդենիսի «Շատ ջրեք» քլորակայանում իրականացվել է քլորացման սարքերի լվացում և կարգավորում՝ խցանումներից խուսափելու համար:



● «Արմավիր» տեղամասի «Արտամետ», «Մրգաշատ» քլորակայաններում փոխարինվել են դոզատորային պոմպերի միջադիրները:

● Գյուղ Թեղենիսի «Արգական» ք/կ-ում տեղադրվել է նոր 1.5KW, Q=5.8m³/h, H=47.7m GRUNDFOS պոմպը (ավելի փոքր պարամետրերի ռեզերվային պոմպ է), որը հոսանքի անջատման դեպքում հնարավոր կլինի շահագործել նաև գեներատորով:

● Գյուղ Թեղենիսի Արգական ս/գ-ում իրականացվել է մաքրություն կոնտակտային ջրամբարի մաքրում պատերից և առաստաղից թափված բետոնի կտորներից:



● Գյուղ Կապսիի «Կապսի» ք/կ-ում իրականացվել է քլորի պղնձե խողովակների փականների մաքրում՝ հուսալի քլորացման նպատակով: Իրականացվել է նաև չոր խցի երկայթ դռան ծխնիների փոխարինում, ինչի արդյունքում խուցը հերմետիկացվել է ջրի ներթափանցումից:

● Գ. Արեգնադեմի Արեգնադեմ ք/կ-ում իրականացվել է քլորաջրի արտահոսքի վերացում, որի նպատակն էր քլորացման համակարգի անխափան աշխատանքը:



● Քաղաք Վանաձորի «Մայմեխ» ք/կ-ում իրականացվել է նոր Wilo WJ-202 պոմպի տեղադրում և համակարգի բարելավում: Տեղադրվել է նոր Wilo WJ-202 պոմպ, քանի որ հինը շարքից դուրս էր եկել և պոմպի վերևի խճուկից կար ջրի արտահոսք: Ամբողջովին փոխարինվել են քլորացման համակարգի խողովակները և փականները: Քլորակայան մտնող մաքրուր ջրի խողովակի վրա տեղադրվել է գոխչ, որը հրատապ էր և ապահովվել է պոմպի երկարակեցությունը:



● Քաղաք Ստեփանավանի Գյուլիդար ք/կ-ում իրականացվել է քլորացման բարելավում (նախկինում օրական 2 անգամ ջրամբարում քլորակիր կախելու փոխարեն, տեղադրվել է քլորի լողանային սարք):

● Գյուղ Զովասարի Ծաղկասար ք/կ-ում իրականացվել է լուսավորության կարգաբերում. քլորակայանի տարածքում հին փոխարեն տեղադրվել է նոր լուսատու, փոխարինվել է քլորակայանի շենքի չաշխատող բոլոր LED լամպերը:

● Քաղաք Թալինի Կենտաղբյուր ք/կ-ում ևս իրականացվել է լուսավորության կարգաբերում (քլորակայանի շենքի չաշխատող բոլոր LED լամպերը փոխարինվել են նորերով):



3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

● Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնի կողմից պատասխանվել է 34547 զանգի, որից առևտրային բնույթի զանգերը՝ 11672: Երևան քաղաքի համար եղել է 9063 զանգ:

● Հունվար ամսվա Երևանի ցուցանիշը կազմել է 77,6%, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2609 զանգ (22,4%): Շահագործման վերաբերյալ ստացվել է 22875 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 16619 զանգ (72,7%), իսկ մարզերինը՝ 6256 զանգ (27,3%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիթ

		Ստորաբաժանում	
Առևտրային	Ընդամենը		11672
	ԵՐԵՎԱՆ		
	ՄԱՐԶԵՐ		2609
Շահագործում	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ		22875
	ԱՐԵՎԵԼԲ		10287
	Շենգավիթ		2218
	Կենտրոն		1942
	Հյուսիս(Ավան,Նոր Նորք)		1287
	Էրեբունի		2083
	Պումպ		487
	Սարգեր		2270
	այդ թվում Կոյուղու վթար		42
	այդ թվում Դիտաների խցանում		3458
	ԱՐԵՎՍՏՈՒՏՔ		12588
	Արաբկիր		2011
	Քանաքեռ-Զեյթուն		1148
	Մաշտոց		2245
	Շահումյան		2286
	Պումպ		912
	Սարգեր		3986
	այդ թվում Կոյուղու վթար		66
այդ թվում Դիտաների խցանում		5121	
		Ընդամենը	34547

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ




Հունվարը, Ամանորի և Օճնդյան տոների հետ կապված, ավանդաբար կարճ ամիս է, դրա համար աշխատանքների ծավալն էլ շատ մեծ չի եղել: Այնուամենայնիվ, Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/, Մետրիկա Խորհրդատվական ընկերության հետ համագործակցությամբ ժամանակին արձագանքել է համակարգում առաջացած բոլոր մարտահրավերներին ու լիարժեք իրականացրել իր գործառնությունները:

Հաշվետու ամսին, կապված COVID 19-ի հետ, աշխատանքը հիմնականում իրականացվել է հեռավար ռեժիմով, բնականաբար ապահովելով հուսալի կապ և սերտ համագործակցություն Վեոլիա Ջուր ՓԲԸ բոլոր ծառայությունների հետ:



Այդ ընթացքում առաջին հերթին ուշադրություն է դարձվել ջրանջատման և ապրանքների ու ծառայությունների մատակարարման մրցույթների վերաբերյալ հայտարարություններին, որոնց հրապարակումը պարտադիր պայման է: Այնուհետև, հետևողական աշխատանք է տարվել ընկերության համակարգը, դրա տարբեր ստորաբաժանումների ամենօրյա գործունեությունն ու ինժեներական կառույցներում կատարվող աշխատանքը և իրականացվող ներդրումային ծրագրերը հնարավորինս լայն հանրությանը ներկայացնելու համար:



Իրադարձությունների մեխն այստեղ Գառնի - Երևան և Գառնի - Արարատի մարզ մայրուղային ջրատարների վթարն էր ու դրա հետ առաջացած խնդիրները: Հունվարի 23-25 ժամանակամիջոցում դրանց անդրադարձ է կատարվել 7 անգամ /2 մամուլի հաղորդագրություն և 5 տեսանյութ, այդ թվում գիշերային աշխատանքին նվիրված/:

Այդ կերպ հանրությունը ոչ միայն տեղեկացել է վթարների պատճառների, այլև խողովակաշարերի վերանորոգման ընթացքի, գործի առանձնահատկությունների, համակարգում ջրատարների դերի մասին: Նաև ցույց է տրվել, թե ինչ դժվարին աշխատանք է կատարում ՎեոլիաԹիմը վթարների վերացման նպատակով, կարևորելով սպառողների կայուն ջրամատակարարման շուտափույթ վերականգնման անհրաժեշտությունը: Իսկ իրադարձությունների քրոնիկոնը կարծես ընթերցողներին մասնակից է դարձրել աշխատանքների ընթացքին ու դրականորեն տրամադրել Օպերատորի նկատմամբ:

Հաջորդն իր կարևորությամբ հետևյալ հրապարակումներն են եղել. Արևմտյան 66ա հասցեում տեղակայված կենտրոնական կարգավարական ծառայության /Կարգավարական բաժին/ մասին տեղեկատվությունը, որը, հանդիսանալով նորություն, ինչպես և պետք էր սպասել, զգալի հետաքրքրություն առաջացրեց ֆեյսբուք սոցիալական ցանցի մեր պաշտոնական էջի ընթերցողների շրջանում: Նաև կարևոր էր ընթերցողներին ներկայացնել տեխնիկական ծառայությունների համար նախատեսված UAZ Profi բեռնամարդատար ավտոմեքենաների հերթական խմբաքանակի ներկրումն ու գործառնական նշանակության պարզաբանումը:

Միաժամանակ, շարունակվել է ուշադրության կենտրոնում ժառանգության համար դեռևս թիվ մեկ խնդիր հանդիսացող ռազմական թեման: Այս կապակցությամբ հունվարի 28-ին նշվել է Բանակի օրը, ինչպես նաև հրապարակվել ՀՀ ՊՆ-ի ու զինվորական մասերից մեկի հրամանատարի շնորհակալագրերը արցախյան պատերազմի ընթացքում ՎեոլիաԹիմի ներդրման համար:




Գործունեության բազմազանության և սպառողներին հնարավորինս մոտ լինելու ընկերության ձգտման ցայտուն արտահայտություն է հանդիսացել երևանյան դպրոցներից մեկին ցուցաբերած օգնությունը՝ խմելու ջրի վթարի վերացման և ջրամատակարարման կարգավորման գործում:

Իսկ քանի որ նման շարունակական վերաբերմունքն աննկատ չի ընկնում և հանրության շրջանում ՎեոլիաԹիմն ավելի ու ավելի է ընկալվում որպես աջակից կազմակերպություն, աշխատանքն էլ բնականաբար արժանանում է բարձր գնահատականի: Մույն հանգամանքով պայմանավորված, ճիշտ համարվեց ՖՔ - ի պաշտոնական էջում հրապարակել Արմավիր քաղաքի մի խումբ բնակիչների շնորհակալական նամակը տնօրինությանը իրենց ահազանգին արագ արձագանքելու համար:

Այս բոլոր հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում, որոնք նույնպես հաշվետու ամսին բավական ակտիվ են գործել:

!! Գառնի - Երևան մայրուղային ջրատարի վրա վթարի վերացման աշխատանքներն ավարտվեցին:

Սկսվել է ջրի մատակարարումը Կուրաբաժեն, Էրեբունի, Կենտրոն, Շենգավիթ վարչական շրջանների և Արարատի մարզի մի շարք գյուղերի սպառողներին:



☀️ Գառնի քաղաքի ջրաբերանի վրա վթարի վերացման աշխատանքներն ավարտվեցին:

Շնորհակալ ենք Արմավիրի բնակիչներին #ՎեոլիաԹիմ-ի աշխատանքը բարձր գնահատելու համար

🇷🇺 #ՎեոլիաՀայաստան #ՎեոլիաԹիմ

«Քարև Զեղ հարգելի Վեոլիա Ջուր ՓԸԸ, ուզում եմ անծածել և քաղաք Արմավիրի մի խումբ բնակիչների կողմից հայտնված շնորհակալություն Վեոլիա Ջուր ՓԸԸ-ի ք. Արմավիրի մատակարարող շրջող աշխատողներից և ք. Երևանից ժամանած մասնագետներից՝ արագ արձագանքի և մասնագիտական լուծման, մեր կողմից ներկայացված ջրի ցածր ճնշման թերությունը վերացնելու առիթով:»

ք. Արմավիրի Մայրա-Եղվա 2 նրբաձեռքի 8 տան բնակիչ՝ Կանդակ Հարությունյան, փոքրից Մայրա-Եղվա և Արարատյան փողոցի բնակիչներ

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ


- Հաշվետու ամսում Բաժնի կողմից մշակվել, ձևավորվել և ադապտացվել են Վեոլիա Գրուպի «Կոռուպցիայի դեմ պայքար» և «Հակակոռուպցիոն վարվելակերպի կանոններ» բրոշյուրները:
- ՈԱԱ Բաժինը, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի, Հրդեհային անվտանգության կանոնների, Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության տեխնիկական կանոնակարգերի և աշխատողների անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրական այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներով, մշակեց 2021 թվականին նախատեսվող Ընկերության արտադրական վտանգավոր օբյեկտներ (քլորակայան, ամբարձիչ սարքավորումներ, ամբարձիչ մեքենա, քլոր տեղափոխող ամբարձիչ մեքենա և կասթսայատուն) շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմերի, եռակցողների, էլտնտեսությունը սպասարկող, շահագործող անձնակազմերի, գազաբալոնային մեքենաներ շահագործող աշխատողների մասնագիտական որակավորման դասընթացների թվով՝ 12 տեխնիկական առաջադրանք:

5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ


- Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ՈԱԱ բաժնին ներկայացվել են կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:
- Շարունակվել են Ընկերության ստորաբաժանուժներին տրամադրվել համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներ:

5.3. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

- Բաժինը Տեղեկատվական տեխնոլոգիաների 10 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» հեռավար դասընթաց, որից հետո մասնակիցները լրացրեցին դասընթացի յուրացման գնահատման հարցաշար:




- Բաժինը Ընկերության Գործառնական տնօրինության Ջրի որակի վարչության 9 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Ժամանակի կառավարման գործիքակազմ» հեռավար դասընթաց:



- Ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության մեկ աշխատողի համար իրականացվեց «Խմելու ջրի որակի հսկողությանը ներկայացվող պահանջներ» հեռավար դասընթաց:

2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Հունվար ամսվա ընթացքում IT բաժնի կողմից իրականաց հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև

- IT բաժնի աշխատակիցների համար ստեղծվել և հաստատվել է հերթափոխությունների օրացույց հանգստյան օրերի համար՝ աշխատանքային շարունակականություն և համակարգերի անխափանելիության ապահովման նպատակով:
- Ստեղծվել և տրամադրվել է 2020 տարվա IT բաժնի կողմից իրականացված աշխատանքների և 2021 տարվա համար նախատեսված աշխատանքների մասին զեկույց/ներկայացում
- Կազմակերպվել և անցկացվել է “Առաջին օգնության” դասընթացը:
- Մասնակցվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության խորհրդի ժողովին: Քննարկվել են արդիական SS վտանգները և Խմբի SS անվտանգության նախագծերը:
- Մասնակցվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի նոր ղեկավարի հետ հանդիպում, որը նախատեսված էր նոր ղեկավարի հետ ծանոթանալու և “Վեոլիա Ջուր” ՓԲԸ-ի IT անվտանգության հետ կապված առկա խնդիրների և պահանջների համառոտ ներկայացման համար:
- Իրականացվել է IU-Connect հեռախոսային կենտրոն համակարգի ծրագրային տարբերակի թարմացում:
- Ազատ համակարգիչների և մոնիտորների ցանկից առանձնացվել և բաշխվել են սարքավորումների մի մասը: Փոխարինվել են փչացած մոնիտորներ և հնամաշ համակարգիչներ կազմակերպության աշխատակիցների մոտ:
- Իրականացվել է Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Իրականացվել է Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների արդիական թարմացումների տեղադրումը:
- Բացվել է G Suite օգտանումներ veolia.com հասցեներով բոլոր US բաժնի պետերի համար
- Իրականացվել են փորձարկումներ DataCart տեսակի հեռախոսային SIM քարտի և 3G/4G մոդեմի միջոցով “Լոկատոր” ընկերության ծրագրային փաթեթների հասանելիության և աշխատանքի փորձարկման նպատակով, որոնք ցույց տվեցին, որ այդ ծրագրային ապահովումը հեռակա աշխատանքի դեպքում հնարավոր է իրականացնել առանձին տերմինալ SIM քարտերի:
- Մեկնարկվել է Ջրաչափական սարքերի հեռավար կառավարման մոդուլի համար մրցույթի տեխնիկական նյութերի նախապատրաստումը
- CyberReason ընկերության կողմից տրամադրվել է EDR համակարգի գնային առաջարկը “Վեոլիա Ջուր” ՓԲԸ-ի համար: Այդ առաջարկը տրամադրվել է Գլխավոր Տնօրենին հաստատման համար:
- Անցկացվել է հանդիպում Գնումների վարչության VESTA ծրագրային համակարգի ներդրման հարցի շուրջ: Հանդիպման արդյունքում հաստատվել են ստորև պայմանավորվածությունները
 - ▶ Գնումների վարչության կողմից կտրամադրվի տվյալների համեմատական ցանկ Հայկական Ծրագրեր ծրագրային փաթեթի և VESTA համակարգի միջև:
 - ▶ Հիմնվելով այդ տվյալների համեմատական ցանկի վրա, կկազմակերպվի հանդիպում Հայկական Ծրագրեր ընկերության համապատասխան մասնագետների հետ և կքննարկվի անհրաժեշտ տվյալների ավտոմատ արտահանման հնարավոր տվյալները:
 - ▶ Կստեղծվի փորձնական տվյալների ցանկ և կներբերվի VESTA համակարգ:
- Տրամադրվել է Google Admin թեստային համակարգի հասանելիություն IT բաժնի աշխատակիցների համար և կազմակերպվել են դասընթացներ: Դասընթացների հիման վրա անհրաժեշտ քննությունների բարեհաջող հանձման դեպքում IT բաժնի աշխատակիցներին կտրամադրվի Google Admin համակարգի հասանելիություն ինչը թույլ կտա կառավարել կազմակերպության Google դիտարկիչները և ChromeBook սարքերը:
- Անցկացվել է “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության IT օպերատոր” հաստիկի համար հարցազրույցներ:
- Ստեղծվել է Չարենցավան տեղամասի տեսահսկման համակարգի պրոեկտ և մեկնարկվել է անհրաժեշտ սարքավորումների գնման գործընթաց:
- Մեկնարկվել է առցանց վճարումների մոդուլի ստեղծման նախագիծը:
- Ֆուչիկի 1/3 հասցեում իրականացվել են լարանցման աշխատանքներ ներքին հեռախոսային համակարգի համար:
 - ք. Արտաշատ, Արազի 8 տեղամասում իրականացվել է Ջի Էն Սի ալֆա ընկերության լարանցումների տեղափոխում նոր ցանցային դարակի համար:
 - Ստեղծվել և տրամադրվել է IU Connect ծրագրի նոր օգտատեր 1-85 բաժնի համար:
 - Սպասարկվել է մոտ 350 գանգ IT բաժնի աջակցության համարով
 - Գրանցվել և փակվել է մոտ 350 աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Հունվար ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ջրաչափերի փոխարինման միասնական հարթակ ծրագրային ապահովման մեջ մի շարք թարմացումներ և փոփոխություններ են իրականացվել կապված գործընթացի ավտոմատիզացման և նոր ի հայտ եկած խնդիրների դեմ:

- Կատարվել են մի շարք ծրագրային թարմացումներ ինտերակտիվ համակարգում:
- Նոր հեռախոսներ է տրամադրվել Առևտրային տնօրինության աշխատակիցներին՝ աշխատանքի որակի բարելավման նպատակով:

- Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունվար ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

- Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահովաբանական գործառույթներ) Ապահովաբանական և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունվար ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	1	-	-
Էրեբունի	3	1.0	0.2
Շենգավիթ	1	0.3	0.0
Կենտրոն	2	0.7	0.1
Արաբկիր	8	3.6	0.6
Մաշտոց	2	2.1	0.4
Շահումյան	3	0.6	0.1
ԱՎԲ	52	76.1	7.4
Շիրակ	23	4.0	0.7
Արթիկ	1	0.2	0.0
Արարատ	15	2.0	0.3
Աբովյան	32	13.6	2.1
Հրազդան	4	0.9	0.2
Այվերդի	1	0.3	0.0
Ապարան	1	0.3	0.1
Արտաշատ	18	3.9	0.7
Գավառ	10	2.2	0.4
Էջմիածին	1	0.2	0.0
Ճամբարակ	1	0.1	0.0
Աշտարակ	8	1.0	0.2
Ընդամենը	187	113.0	13.4

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	8	2.76	32	0.15
Էրեբունի	15	5.64	84	1.02
Շենգավիթ	3	4.10	32	0.18
Կենտրոն	8	2.28	35	1.01
Արաբկիր	5	1.18	17	0.14
Մաշտոց	15	4.80	74	8.15
Շահումյան	18	5.42	86	0.62
Քանաքեռ-Զեյթուն	4	0.96	34	0.19
Լոռի	19	4.55	57	0.63
Շիրակ	26	5.99	121	0.45
Արթիկ	6	2.58	42	0.23
Արարատ	1	0.06	2	5.43
Աբովյան	5	1.02	28	0.12
Հրազդան	15	2.13	34	0.09
Այվերդի	2	0.33	3	0.02
Աշոցք	1	0.28	9	0.06
Արտաշատ	2	0.34	2	0.00
Բերդ		-	16	0.07
Գավառ	1	0.52	17	0.11
Գորիս		-	1	0.01
Դիլիջան	6	1.85	8	0.03
Եղեգնաձոր	1	0.26	3	0.01
Էջմիածին	7	2.31	40	0.22
Թային		-	1	0.88
Իջևան	2	0.10	22	0.07
Կապան	3	0.77	17	0.05
Մասիս	6	5.96	13	0.06
Նոյեմբերյան		-	5	0.02
Արմավիր	11	4.27	110	0.78
Ջերմուկ	1	0.26	1	0.00
Սևան	2	0.75	9	0.05
Վայք		-	3	0.01
Աշտարակ	1	0.19	5	0.04
Չարենցավան	13	3.29	45	0.15
Միսիան	1	0.52		-
Սպիտակ	2	0.26	7	0.03
Ստեփանավան	1	2.59	2	0.01
Տաշիր		-	1	0.02
Ընդամենը	211	68.32	1018	21.12



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am